

ՍՈՒՐԲ ԽԱԶ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ  
ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross  
Armenian Church

8 Մայիս 1979

Հոգեշնորհ  
Տէր Ազգէն Ծ.Վրդ. Բէշիշեան  
Առաջնորդական Փոխանորդ  
Գանատայի Հայոց  
Թորոնթօ.

Հայր Սուրբ,

Ժխական Խորհուրդիս ատենապետ Տօրթ. Վարդան Այնաճեանի ուղղեալ Ձեր  
27 Ապրիլ 1979 թուակիր նամակը ստացանք:

Ներքին Ձեզ կը յանձնենք Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ անունով  
պատկան իշխանութեանց մօտ կատարուած դիմումագիրները եւ ստացուած  
վաւերագիրները: Ասոնցմէի հնրօրրօրէշնի վաւերաթուղթը արդէս 10 Յուն-  
ւար 1979 թուականին, Ձեր ալ ներկայութեան, պաշտօնական ժողովի մը ըն-  
թացքին, Արեւելեան Թեմի Առաջնորդ Սրբազանին փափարին համաձայն իրեն  
տրուած էր, այն հասկացողութեամբ, որ Առաջնորդ Սրբազանը թեմական Խոր-  
հուրդի Ատենապետ Դատաւոր ժան Մամարեանի հետ խորհրդակցարար, այս ին-  
քօրրօրէշնր թեմէն ներս առնելու կարելիութիւնները պիտի ունենան սիրէր:  
Ինչպէս Ձեզ յայտնի է, ըստ Վեհափառ Հայրապետի հրահանգին 16 Ապրիլէ  
ի վեր առ ժամարար դադրեցուցած ենք Ս. Գատարագները եւ ծիսակատարութիւն-  
ները, որպէսզի նոյն հրահանգին համաձայն Դուք՝ որպէս Առաջնորդական փո-  
խանորդ Գանատայի Հայոց, նշանակէք հոգեւորական մը վերապահելու համար  
Ս. Գատարագներու եւ կատարելու ծիսակատարութիւններ, որոնց դիմումները  
արդէն իսկ ստացած ենք:

Այսու կ, ուզենք Ձեր ուշադրութեան յանձնել, թէ հակառակ Վեհափառ  
Հայրապետի որոշումին եւ Ձեզի տրուած յստակ հրահանգին, որչինք 17 Ապրիլ  
1979ին Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ մօտաւորապէս 120  
ազգայիններու ներկայութեան Ձեր կողմէ կարդացուեցան, տակաւին Վ. Երրոր-  
դութիւն Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի մաս մը անդամներ ու իրենց կարգ  
մը ընկերները, թէ՛ Եկեղեցւոյ մէջ եւ թէ՛ տուն տուն հեռաձայնելով Ս. Խաչ  
Հայաստանեայց Եկեղեցին թեմական իշխանութեան շենթարկելու, Գանատական  
Անջատ Թեմի հաստատումը յետաձգելու եւ Արիս Սրբազանը քաղաքէս հեռացը-  
նելու ընդթող գրուած խնդրագրի մը ստորագրութիւն կը ջանան հաւարել:

Վեհափառ Հայրապետի իղծ եւ հրահանգներուն դէմ կազմակերպուած ըլլա-  
լով սկսուած այս շարժումը, հանդարտելու փուլին մէջ մտնող գաղութ  
կրնայ շատ աւելի տագնապալից իրողութեան մը առջեւ բերել:

Վերոյիշեալ տուեալներու լոյսին տակ, վստահելով Ձեր լայնախորհութեան  
եւ իմաստութեան, ինչպէս Վեհափառ Հայրապետն ալ իր հեռագրին մէջ գրած է,  
Ձեզմէ անգամ մը եւս կը խնդրենք որ անմիջապէս հոգեւորական մը նշանա-  
կէք, որպէսզի ըսականոն ընթացքը վերահաստատուի ու առիթ չընծայուի  
անոնց, որոնք Հայրապետական իղծ եւ հրահանգներու շանսալով, գաղութիս  
զոյգ եկեղեցիներուն ապագայ համագործակցութիւնը այսօրունէ կազինահա-  
րել կ'աշխատին:

Ստորեւ կը ներկայացնենք ծխական Խորհուրդիս այժմու անձնակազմը:  
Փափարելի է, որ Արեւելեան Թեմի կանոնադրէն երկվեցեակ մը մեզի  
տրամադրէր:

ՄԱՐԿԻ ԽՍ.Ձ  
 ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ  
 ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross  
 Armenian Church

Մենք՝ Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական Խորհուրդս եւ Մեր համայնքը տատրաւ է Ձեր շնորհ հաւանութեւն եւ համագործակցելու ի շահ Մեր գաղութի համերաշխութեան եւ ի փոխ Հայաստանեայց Եկեղեցւոյ։  
 Ապաստելով Ձեր անմիջական շինարար տնօրինութեան, յարգանքով

ի դիմաց  
 Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ  
 ծխական Խորհուրդի

*Հակոբ Նար*

*Սոթ. Ա. Վ. Այնամեան*

Յակոբ Նար  
 Ատենադպիր

Սոթ. Ա. Վ. Այնամեան  
 Ատենապետ

Սոթ. Վարդան	Այնամեան	Ատենապետ
Տիար Արմէն	Քիւրքմեան	Փոխ Ատենապետ
Տիար Յակոբ	Նար	Ատենադպիր
Սոթ. Վահէ	Սիւսեան	Փոխ Ատենադպիր
Տիար Ղեւոնդ	Շահմելիբեան	Գանձապահ
Տիար Անդրանիկ	Չազարեան	Փոխ Գանձապահ
Տիար Սուրէն	Իվրան	Խորհրդական
Տիար Եղիա	Թորոսեան	..
Տիար Մարտիկ	Հէրիմեան	..
Տիար Գրիգոր	Մազմանեան	..
Տիար Լեւոն	Չէօմլէքմեան	..
Սոթ. Ասէլ	Քերամեթիեան	..
Տիար Յակոբ	Քէլէշեան	..
Տիար Ժան	Ֆէնէրմեան	..

Ներքեակ՝

- 1 Application for registration
- 2 Notification of registration
- 3 Letters Patent
- 4 Holy Cross Armenian Church By-Law No. I